

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Շատուրիանի խմբագրությունում

Օտարաբարձարացիք գինում են ուղղակի  
Тифлис. Редакция „Мшакъ“

# ՄՇԱԿ

Խմբագրատանը բաց է առաջօրեան 10-2 ժամ  
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լիզուով  
Յայտարարութիւնների համար վճարում են  
խորանային բառին 2 կոպեկ:

## ՄՇԱԿ ԳՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԻ ԼՐԱԳՈՐ 1878 թից

Եւ չբարձրագույն ԵՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոներին հետևեալ օրերից:  
Լրագրի գինը և պրոզրամման նոյն են մնալու: Մենք կը ստանանք ՍԵՓԵՆԿԱՆ ՀԵՌԵՆԻՐՆԵՐ: ՄՇԱԿ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ և պ. ՇԱՏՈՒՐԻԱՆԻ խմբագրութեան:  
ԵՆՆՆՁԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպեկով հատր: Օտար բարձրներից պէտք է գինը հետևեալ հասցեով՝ ТИФЛИСЬ Редакция «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Մեր ընտանեկան բարոյականութիւնը... Ներքին և արտաքին թիֆլիսի փոփոխութիւնները: Մեր ներքին իրավիճակը: Նախկին խմբագրին, Նախկին խմբագրին... Արտաքին և ներքին լուրերը: Մշակի շնորհակալները: Յայտարարութիւնները: Տեղեկացոյց: Բանասիրական: Մի քանի խօսք պ. Միքեղաձէին:

### ՄԵՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՈՑՍՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Ընթերցողը երևի յիշում է մեր այս տարվայ առաջին համարում տպված Հուշի նամակը: Այժմ այդ մասին կուզենայինք խօսել: Մենք շատ անգամ խօսել ենք մեր ընտանեկան կեանքի վրա, նկարագրել ենք նրա պակասութիւնները, ուշադրութիւն ենք դարձրել ընտանեկան ճնշման և բռնաւորութեան վրա: Բայց մի երևոյթ կայ, մեր ընտանիքների

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մի քանի քօօփ Պ. ՄԻՔԵՂԱԶԻՆ  
Մշակի 94-դ համարում արտատպել էր «ԵՐԵՎԱՆԻ ԼՐԱԳՐԻ Կ. ՄԻՔԵՂԱԶԻՆԻ ՆԱՄԱԿԸ»: Այդ նամակում ցարձք արած տեսանք որ այդ թղթակցութեան բուն նպատակը կարծես հենց էն է եղել, որ այդ նպատակը լրացրի միջոցով ամենայն ուրիշ յարաբանի զգուշացնելու հայ ժողովուրդը, այն ժողովուրդը, որ իր անձնուէրը ծառայութեամբ էր հաստատում նպատակութեամբ կես դարուց առկա է, որ գրաւել է թէ Առաջին բարեկեան կառավարութեան և թէ ուսուցող ազգի նշանուէր մասի համակրութիւն ու սէրը:  
Պարոն Միքեղաձէի նամակը զիտովն տարցուցանում է, որ ոչ թէ միայն ճշմարտութեան ճանապարհից չեղված է, այլ կրկն

մէջ որի վրա ոչ որ ուշադրութիւն չէ դարձրել՝ դա ծնողների, մոր և հօր անհաստատ վարմունքն է իրանց երեխաների հետ:  
Հատ անգամ մեր ծնողները ունեւոյ երեք չորս երեխայ, առաջիններին սիրում են, նրանց հետ մարդասիրական կերպով են վարվում, իսկ վերջինին, զրեթէ առանց պատճառի, սկսում են առեւ սկսում են նրան ճնշել հալածել, ծեծել, գործ են անում նրան ինչպէս տան ծառայ կամ ազակին... Այդ տեսակ երևոյթ դարձացած մարդու համար անբացատրելի է: Այդ տեսակ հրէշաւոր երևոյթ կարելի է բացատրել միմիայն խորին սոգիտութեամբ և նախապաշարմունքով: Հատ անգամ մայրը որ զիցուք երեք երեխայ է բերել, չորրորդին

բովանջներով կուրացած՝ չէ կարողացել տեսնել և վերահասու վնել այն ամեն զոհաբերութեանը, այն անխաբարտ սիրոյն, որ հայ ժողովուրդը ամեն ժամանակ ցոյց էր տալի ներկայ պատերազմում առաջ դիմադրելու: Ես անձամբ ներկայ եմ եղած այն բազմամարդ հայկերայիններին որք միայն փութաջան հողացողութեամբ և սիրով պատրաստում էին նրանք նի քաղաքացիք և և զիւղերի հայ հասարակութիւններից շատերը, իսկ ինչ կը վերաբերի Շիրակայ, Բաթումի և Ալաշկերտի գաւառների հայկերին, նրանց ուրախութեանը չափ չը կար ուսու գնումսրներին նրանք տեսնելու կարծում էին թէ մի մի կրկնապէս հրէշաւորներ են որ երկուք լինելով իրանց բազմադարեան գերութեան շղթաները լուծելու եղած են:  
Այս սյուղէս վնելուց յետոյ, թող ներքին մեզ պարոն Միքեղաձէին, որ ամենին զբարեբաղութիւն է անել թէ հայ շինականները և նրանց կանայքը 1/2 ֆունտանոց չորեք քայքայ 15-16 կոպեկով էին վաճառում: Բայց սուղաւանի վրա, այն ինչ հազարաւոր անխաբարտ վաճակը, հաստատում են որ հայ գիւղացիք չէ թէ այգիլիսի հարստացումը միջոցների չէին գիտում, այլ գրա հակառակ

ճնելու ժամանակ պատահմամբ անտանելի ցուեր է գլում, առեւ տանջվում է նրան ճնելու ժամանակ քան թէ առաջիններին բերելու ժամանակ: Այն ահա, կարծես թէ երեխան մեղաւոր է ճնշողանի չարչարանքների մէջ, մայրը սկսում է երեխային առեւով առել, զրկում է նրան ամեն բանից, վարվում է նրա հետ բոլորովն այլ կերպ, քան թէ իր մնացած երեխաների հետ, հալածում, հայհոյում է նրան, անգաղար գլխին խփում, ստորացնում, և հասցնում է երեխային մինչև բթամտութիւն, մինչև իւրիտութիւն:  
Պատահում է որ մի ընտանիքում երեխան ծնվում է այն ժամանակ երբ հօր գործերը սկսում են վատ գնալ, ընտանիքը յանկարծ աղքատանում է, և ահա մեր ծնողները, այդ նախապաշարված էակները, երեխայի ծննդեան են վերաբերում գործերի վատ ընթանալը, կարողութեան փչանալը... Այդպէս նայում են երեխայի վրա ինչպէս նախախնամութենից ուղարկված երկնային պատժի վրա, և երեխայից են հանում իրանց հասած զժբարդութեան ամբողջ վոթժը:  
Այդ տեսակ երևոյթ, մենք կրկնում ենք, չենք կարող մեզ ուրիշ կերպ բացատրել եթէ ոչ մեր հայոց ընտանիքներում տիրող հրէշաւոր սոգիտութեամբ և արմատացած ստորադիմելի նախապաշարմունքներով:

Այդ տեսակ անարդար և բարբարոս վարմունքի հետևանքը շատ անգամ այն է լինում, որ տղան կամ աղջկը փախչում են իրանց հայրական տնից տարիներով կրած բարոյական և ֆիզիկական չարչարանքներից ազատվելու համար: Այդպէս շատ անգամ այդ տեսակ զոհ երիտասարդ կատարելապէս բթամտաց, դէպի իր անձը բոլոր պատիւը կորցնելուց յետոյ՝ դառնում է գող և աւազակ, իսկ զոհ աղջկը նոյն հողեկան չարժառիթներից զրկված և անվերջ մարմնական տանջանքներ կրելուց յետոյ՝ ընկնում է անբարոյականութեան մէջ և դառնում է հասարակաց կին:  
Ընտանիքի միւս անդամները քայքայը և եղբայրները մեծ մասամբ ոյժ չունեն որ պատերազմեն իրանց ընտանեկան, ներքին բռնաւորութեան դէմ, օրէնքների վրա էլ այնքան քիչ հասկացողութիւն ունեն, որ իրանց պարտաւորութիւն համարեն յայտնել մարմնաւոր իշխանութեանը իրանց

առաջնորդը գիւղից անցնելու հայ կանայքը կանչում էին—առաջա՛ք, դարձա՛ք, արե՛ չօրա՛կ կուշա՛ք և մինչդեռ մէկը հացի էր հրապարակում, մի ուրիշը թան, մածոն, ժամիկ հողէ գաւաթների մէջ լցրած՝ մօտ էր բերում, մի այլ տեղ ստաւել սրտագրու տեսարան էր հանդիսանում: Մանկամարդ ջանել հայ կինը որ մի չափ ցորենով ձեռք էր բերել բեռնաւորից մի քանի վարունգ, որից հողի մէկը փոքրիկ կարէին (կարպուկտին) բաժին էր ընկել, և ճիւղով իր մօր գրկում վարունգը սխմել էր իր կրծքի վրա—անա անցնում է յոյնած սողալար և մայրս մտիկ չը տարով իր մանկան լաց ու կոճին, խիարը խլում է մանուկից և առկիւն և սողալարին, իսկ փոքրիկը Նաբեին փայլալայնում ստում է: լաց մի վր բարան, արեւաք դարբան, թող խաչ խիար տարա՛ք, աղբիւն, ուտա՛ք, էնտ է օր կերթա՛ց, խըտ մեր գուշմին ինչէ՛ք կիս կինաց, էրան կրկնափայ, որ մեր էրկիր անօրինաց անստուգած քրտերաց ձեռքէն սղատաց, մեր խօքին մեր լոտ խուտաւ փրկաց և այլն և այլն: Երկուսն որքան և չէր հասկանում այն բառերի նշանակութիւնը, այնու ամենայնով մօր անտոյր վարմունքից, զինուորի փայլան նշանադրեալ վրա կէս մի



զրուակէր, որ ազատ չը կացուցանեն նրան զե-  
նուորական ծառայութենայ և թոյլ աննրան  
մասնակցելու կայսրութիւնը պաշտպանելու  
գործը սուլթանի ուրիշ հպատակների հետ  
միասին:

Աստի մնասիրելով մեր նախահայրերի նման  
զինուորական արհեստը, մենք կամենում էինք  
այս մեծոքով ազատվել քուրդերի յարձակում  
ներկից, որոնք սպանում էին մեր եղբայրնե-  
րին, անպատվում էին մեր կանանց և օրի-  
որդներին և պղծում էին մեր եկեղեցիները:  
Մեր խնդիրը չընդունվեցաւ և հոյ արիւնք  
ինչպէս առաջ հոսում էր անպաշտպան այս  
բարբարոսների սրերի տակ: Այժմ Բ. Գուռը  
վտանգի տակ գտնվելով, կամենում է մեզ  
զինուորական ծառայութեան մէջ մտցնել ա-  
ռանց նախապէս զինուորական պատրաստու-  
թեան այդ գործի համար: Այդպիսի պայ-  
մաններով թշնամու վրա ուղարկել, նշանա-  
կում է կամենում են մեզ սպանելու և ու-  
ղարկել Արևմտ կառավարութեան առաջը-  
կութիւնը ծանր քննելու խնդիր է: Չի ունե-  
րական ծառայութիւնը մեզ չէ վախեցնում,  
որովհետև հայոց ազգը անցեալ դարերում  
ցոյց տուց իրան պատերազմի գաշտերի վրա  
և մեր ժամանակներումն էլ առաստի ծառա-  
յութեան մէջ գտնվող զինուորայինը վկա-  
յեցին որ մեր ազգը զեռուս ունի անհասանելի,  
որոնք զինուորական հանձնար հանգամանքնե-  
րից բարձր է կանգնած: Բայց ինչ որ վերա-  
բերում է մեզ, պէտք է ստել որ թիւրքերը  
սխալմամբ կանխապէս կերպով հեռացրին մեզ  
իրանց զօրքերի մէջ ծառայելու և ինչպէս մէկ  
Փրանսիացի գրող ասում է, նրանց տերու-  
թիւնը ու թէ միայն մարմիններ սարկացրեց,  
բայց և հոգիներ պղծեց... Այս խօսքերից յե-  
տայ նախն մասնակցող հայ աստիճանաւոր-  
ները, որոնք շուտ շուտ ընդմիջում էին նրան,  
պահանջեցին նախագահից որ լռեցնէ ծառա-  
խօսին: Այ, ոչ, աղաղակեցին պատգամա-  
ւորները, շարունակեցեք, մենք մէկ զինուոր  
էլ չենք տայ: Մի քանիսը նրանցից, բարձրա-  
նալով իրանց սեղերից, յարձակվեցան ընդդի-  
մադրողների վրա, որոնք իզուր աշխատում  
էին փախել:

Մեծ խառնակութիւն գուրս եկաւ Պատ-  
րիարքը կանգնելով, յորդորում էր որ հանգա-  
տանան, բայց բոլոր միջոցները ի զուր էր:  
Բոլոր այս հարցմունքները, աղաղակները,  
սպանալիքները միանալով միայն մէկ խուլ  
ձայն էր լսվում: Վերջապէս խուլութիւնը մի  
փոքր հանդիպակցի և Խորհի կարիսկոպոսը  
հրաժարվելով խօսքից, նստեց իր տեղը:

Սրանից յետոյ խօսեց Միսի եպիսկոպոս  
Մատթէոս Իզմիրլիանը: Բ. Գուռը — ասաց նա,  
իր խնդիրը հաստատելու համար, ցոյց է  
տալ որ սուլթանի բոլոր հպատակների վրա  
ընդհանուր երաշխաւորութիւն պէտք է լինի:  
Բայց երաշխաւորութիւնը պայմանաւորվում է  
հաստատութեամբ: Այն ինչ այս րոպէին, որ  
ես խօսում եմ, ամենավերաւորական անհա-  
ւասարութիւնը ճաճ կատարի քրիստոնեաների  
բաժինն է կազմում և նրանց վկայութիւնը  
զեռուս չէ ընդունվում դատարաններում:

Հայոց աստիճանաւորները աղաղակեցին  
«Սահմանադրութեան մէջ հաստատութիւն  
է հրատարակած: Նրա գոյութիւնը հիշելով,  
դուք վերադարձում էք սուլթանին, որը նրան  
հրատարակեց»:

— Սահմանադրութիւնը — պատասխանեց  
Մատթէոս եպիսկոպոսը — մինչև այժմ մեռած  
տառ է: Աստուած գիտէ, մի անգամ նա  
գործ կը դնի թէ չէ:

Այս խօսքերը ծածկվեցան ծախհարու-  
թիւններով: Այ, ոչ — շարունակում էր առաջ-  
նորդը — հաստատութիւն չը կայ, մեզ առած  
բոլոր խոստումներին հակառակ, սահմա-  
նադրութեան հրատարակելու ժամանակից,  
մենք այնքան արածուսութիւններ ունենք,  
ինչքան որ առաջ, և քրիստոնեաները այն-  
պէս ստոր են կանգնած մահաւանդների

աչքում, որ մեր թարիւրում հոսող ջուրը,  
անմարդու են համարում նրանք, և մահա-  
տակները արժան չեն համարում մէկ թա-  
ղում բնակելու քրիստոնեաների հետ (սաս-  
տիկ յուզումն): Մենք — ասաց Մատթէոս  
եպիսկոպոսը — չունենք ոչ կրօնական հաւասա-  
րութիւն, որը մեզ առաջարկում են և ոչ  
վտանգի առաջ հաստատութիւն:

Այս առաջնորդից յետոյ խօսեցին մի քանի  
աշխարհական պատգամաւորներ, որոնք ի-  
րանց հոգեւորական եղբայրներից աւելի չա-  
փար լինելով, այն միտքը յայտնեցին, որ  
սկզբունքով հոյ հաստատութիւնը պարտու-  
ւոր է կառուարութեան հրամաններին հը-  
նազանդել: Բայց այս պատերազմի ժամանակ  
անկարելի է համաձայնել որ հայերից զինուոր-  
ներ վերցնեն, այս առարկայի վերաբերու-  
թեամբ հրատարակած կայսերական իրազէի  
և քաղաքային զվարդիայի կանոնադրութեան  
մէջ գտնվող հակասութիւնների պատճառով:

Այս պատգամաւորները նկատեցին, որ եթէ  
իրազէի մեքի համաձայն, քաղաքային զվար-  
դիայի պարտաւորութիւնը պէտք է իրանց  
ընտանիքի պաշտպանութիւնը լինի, այն ժա-  
մանակ կառավարութիւնը իրաւունք ունի  
նրա օգնութեանը դիմել ամեն տեղ, որտեղ  
հայրենիքը վտանգի ենթարկված կը լինի:

Բայց — աւերացրին նրանք — մենք այնքան  
չենք հաւատում կառավարութեան, որ իրա-  
ւունք տանք նրան մեր վիճակի մասին վճիռ  
տալ:

Այսպէսով վիճարանութիւնները վերջացան  
և արդէն պատրաստվում էին ձայն տալ երբ  
նուրեան էֆէնդի նախագահը, տեսնելով  
որ ժողովը կառավարութեան անհամոյ վճիռ  
կը տայ, առաջարկեց որ պատրիարքին յան-  
ձնեն պայման կապելու մեծ կրօնական և  
խառը ազգային ժողովների հետ թէ ինչ  
բովանդակութիւն պէտք է ունենայ Բ. Գրան  
սակէրէի պատասխանը: Այս առաջար-  
կութիւնը ընդունվեցաւ:

Այս վճիռի համաձայն, կրօնական մեծ  
ժողովը բաղկացած 50 արքեպիսկոպոսնե-  
րից, եպիսկոպոսներից, առաջնորդներից և 60  
քահանաներից և խառը ժողովը անգամները  
թուով 28 մարդ, երկուշաբթի օրը, զեկտեմբերի  
17-ին, հասարակական պարիարդարանում, Ներ-  
սես պատրիարքի նախագահութեամբ: Պա-  
տրիարքարանի մասքին մօտ հաւաքվեցաւ  
շատ ժողովուրդ, չը նայելով որ խորհուրդը  
փակված դռներով էր կատարվում: Ժողովուր-  
դը, անհամբերութեամբ սպասում էր վիճա-  
րանութիւնների վերջին և աշխատում էր  
մինչև անգամ մտնել խորհրդի դահլիճը:

Խորհրդի անգամները նոյնպէս մեծ եռանդ  
ցոյց տուին և վիճարանութիւնները ազգային  
ժողովը վիճարանութիւններից սաստիկ էին:  
Ձիսուորակութեան դէմ առաջ բերած ապա-  
ցոյցները կրօնական վարդապետութիւնից էին  
հանած: Էջայոց եկեղեցին — ստում էին առա-  
ջնորդները — սուր մերկացնել մեր հակառակ  
կրօնի պաշտպանութեան համար արդեւում է,  
այն ինչ պատերազմը, որի մէջ մեզ հրա-  
ւիրում են մասնակցել, մահաւանդ կրօնի  
անուանում է և հրատարակված է իբր սըր-  
բազան պատերազմ: Այսպէս ուրեմն, մենք  
յայտնում ենք, մեզ առած կայսերական  
խտապանների հիման վրայ որոնց մէջ մեզ տա-  
լիս են կրօնի և խղճմունքի աղատութիւն,  
որ մենք չենք կարող խորհուրդ տալ մեր  
հաստակիցներին մասնակցել պատերազմին,  
ուր մնաց որ ստիպենք նրանց: Բացի կրօնից  
խօսում են մեզ հետ և հայրենիքի մասին:  
Բայց Թիւրքներ — քրիստոնեաների համար  
հայրենիք չէ, որովհետև մեզ, ներկայ ժա-  
մանակում եղող օրէնքների համաձայն, հա-  
մարում են հող վարձողներ, և մեր ոտների  
տակ գտնվող հողը մեզ միայն ժամանակաւո-  
րապէս է պատկանում և յայտնի հարկի  
վճարման պայմանով: Այս խտրայի պատճա-  
ռաբանութիւնները բոլորի համակրութիւնը

զրուեց և խորհուրդը հետեւեալ վճիռ կայա-  
ցրեց: Քրիստոնեաների զինուորակարգութիւնը  
ներկայ պատերազմի պատճառով անյարմար  
է: Յետոյ սկսեցին մասնաժողով ընտրել այս  
մտքով զեկուցումն կազմելու համար որը  
պէտք է Բ. Գրան յանձնելը հոգեւորակա-  
նութեան պատգամաւորութիւնից: Այս վճի-  
ռը շատ ուրախալի ազդեցութիւն ունեցաւ  
ժողովրդի վրա, որ այս իր ուրախութիւնը  
արտայայտեց ծախհարութիւններով և կեց-  
ցէներ ստեղծով: Բ. Գրան վրա այս վճիռը հա-  
կառակ տպաւորութիւն գործեց, և մեծ վե-  
զիւր իմանալով այս բաները, այնպէս բար-  
կացաւ որ հայերը իրանց սեփական հա-  
մարձակութիւնից վախենալով և չը համար-  
ձակվելով գործը մինչև վերջ տանել, չը  
վստահայան վերլույծեալ զեկուցումն էր հիմ  
փաշային յանձնել: Այսու ամենայնիւ նրանց  
ընդդիմադրութիւնը Բ. Գրան վրա այնպիսի  
ազդեցութիւն ունեցաւ, որ քրիստոնեաներին  
զինուոր վերցնելու մտքը ինչպէս երևում է,  
կամենում են բոլորովին հրաժարվել: Վերջա-  
ցնելով խօսքս պէտք է ստել որ հայերը  
Սահայում առասաց աջողութիւններից քաջա-  
ւերվելով, այժմ զրուս են բարձրացնում և  
ունչ այնպէս չեն ցանկանում, ինչպէս բոլո-  
րովին ազատվել թիւրքաց տիրապետութիւնից:

Մնկախ կամ առասաց Հայաստան լուրում է  
այժմ միշտ մահաւանդութեան բարբարո-  
սութեան դարեւոր զոհերի մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Վիեննայի «Polit. Corresp.» լրագրին  
Աթէնքից հաղորդում են, որ յունաց միսիստրու-  
թիւն զեռուս չէ ցանկանում ուղարկութիւն  
դարձնել ժողովրդի զինուորական ձգտումներին,  
Յունաստանի և Անգլիայի մէջ բանակցութիւն-  
ներ են լինում:

— Փարիզից հեռագրում են յունվարի 17-ին  
(5), որ Մագդալինայի եկեղեցում կատարվեցաւ  
Վիկտոր Լյւմանուէլի հոգեհանգիստը: Սենաթը  
իր նիստը գցեց Վիկտոր-Լյւմանուէլին պատ-  
ուելու համար:

— Հռոմից հեռագրում են յունվարի 17-ին (15),  
Թագաւորի թաղման յուղարկաւորութիւնը կվի-  
րինալը թողեց 10 ամիս: Հանդէսը բաց էին  
անում գործերը, նրանց հետում էին մեծ քանա-  
կութիւն պատգամաւորութիւնների, սենատոր-  
ներ, պատգամաւորներ, հոգեւորականութիւնը,  
բարձր աստիճանաւորներ, օտար ազգերի և կա-  
ռավարութիւնների ներկայացուցիչները, թա-  
գաւորական տներին պատկանող իշխանները,  
Վիկտոր-Լյւմանուէլի առաջին Փիլիպ-աղիւ-  
տանտը ձիւս վրա նստած բռնած ունէր  
հանգուցեալ թագաւորի սուրը, ամպօղանի  
փնջերը բռնած ունէին միսիստր-նախագահը,  
ներքին գործերի միսիստր, սենատի և պալատի  
նախագահները և Արեւելոյստա պատուաւանի  
երկու ասպանները, դապալին հետում էր ցե-  
րէմոնիալ յստերը, որը տանում էր երկաթեայ  
թագ. Վիկտոր-Լյւմանուէլի պատերազմական  
ձին և գործերի զրօշակները պատաւաւոր զօրա-  
բաժինների ուղեկցութեամբ, ամենից վերջը գը-  
նում էին քաղաքային խորհրդի ներկայացու-  
ցիչները, զանազան ընկերութիւնների և հաս-  
րակութիւնների ներկայացուցիչները: Փողոց-  
ների վրա մեծ բազմութիւն էր հաւաքվել պա-  
տգամներին հաղորդել էին սե չոր, ընդհանուր  
տպաւորութիւնը շատ սիրտը շարժող էր: Տան  
և մէկ ժամին և մէկ քառորդին յուղարկաւորու-  
թիւնը հասաւ Պանտեօնի եկեղեցին, որտեղ  
կատարվեցաւ եկեղեցական կարգը:

— C. H. B. լրագրին հեռագրում են Կ. Պոլ-  
սից որ Եկեղեցի-Իսլամը հրամայեց բոլոր հոգե-  
ւորականութեանը քարոզել որ հարկաւոր է Առ-  
տուծոյ կամքին հնազանդվել յազնի պահան-  
ջները ընդունել:

— Վիեննայի «Politische Correspondenz» լրագ-  
րին Կ. Պոլսից հաղորդում են որ Բուլղարիայի  
մէջ գտնվող թիւրքաց գործի մէջ հաջւում են  
բոլորը 110.000 մարդ:

— Պէլզայի գիւսուր թվիչը Հասիպ փաշան  
զեկուս. 28-ին Բ. Գուռը ուղարկած տեղեկագի-  
րին մէջ իրանց տուած է թէ Օսման-փաշան ձիւս  
վրա եղած ժամանակ վերադարձ է և թէ մի  
ամսից կատարելապէս կառուցանայ:

— Կ. Պոլսից գրում են թէ Բ. Գուռը շատ  
անձեր գուր սեղ բանաւարում է, պատճառե-  
լով թէ ուսի լրտեսներ են:

— Անցեալ զեկտեմբեր ամսի վերջին օրերը  
Կ. Պոլսում բանաւարկած է Ֆրանսիայի հպատակ  
մի լեհացի և օսմանեան հպատակ մի հրէայ: Օս-  
մանեան հպատակը բանտից արձակվել է առանց  
երաշխաւորի, բայց լեհացին մնացել է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«St. Petersburg. Herald» լրագիրը հաղորդում է  
որ երեւիլ ղօկտօր Ստրուսերգ, որի պրօ-  
ցէսը սղքան ազնուկ արաւ, նշանակվեցաւ  
այժմ Բերլինի մէջ մի երկաթուղու ընկերու-  
թեան գործերի կառավարիչ:

«Тифл. Вѣст.» լրագիրը լսել է որ օրիորդ  
Անգրիկ Կուս ապանման գործի քննութիւնը  
նշանակված է Թիֆլիսի նահանգական դատա-  
բանում 27-ին փետրվարի:

Քանի մի շաբաթ արանից առաջ վախճան  
վեցաւ Փարիզում Ֆրանսիացի Գիւսաւով  
Կուրբէ երեւիլ նկարիչը, որ պատկանում էր  
նկարչութեան ռեալական ուղղութեանը, Նրա  
պատկերները միշտ ներկայացնում են ժամա-  
նակակից Ֆրանսիական կենքի երեւթներ և  
մեծ մասամբ այնպէս, որ նրա ստեղծագործու-  
թեան մէջ գրեթէ միշտ երևում է դառն ծիծաղ,  
ծաղր ժամանակակից հասարակական կենքի  
մասին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՆԵՐ

10նոյն 27 յունվարի Պաշտօնապէս հա-  
ղորդում են որ Դէրբի իր ընկերների հետ  
բացարկութիւն ունենալուց յետոյ և անգլիա-  
կան նաւատորմի Բէզիկեան ծոցը վերադառ-  
նալու պատճառով, համաձայնեց մնալ իր  
պաշտօնի մէջ:

10նոյն 27 յունվարի Ռուսաց զեկուսան  
Անդրկայում կոմս Շուվալով հարողեց արտա-  
քին գործերի միսիստրութեանը Ռուսաստա-  
նից առաջարկված խաղաղութեան պայման-  
ները, որոնց պիտաւոր կէտերը, կթէ հաւա-  
տանք անգլիական «Morning Post» լրագրի  
խօսքերին հետեւեալ հինգ յօդուածներից են  
բաղկացած՝ 1) Բօլղարիայի ինքնավարու-  
թիւնը և Կ. Պոլսի կօնֆերանցիայի վճիռն հա-  
մաձայն նահանգապետների քրիստոնեաներից  
նշանակելը, 2) Թիւրքաց գործերի յայտնի սե-  
ղերից հեռացնելը, 3) Բուլղարիայի անկախու-  
թիւնը, պահանջելով նրա համար Թիւրքիա-  
յից պրամական վարձատրութիւն: Ռուսաստա-  
նին սերբիական մէկ գաւառ զեկուս համար,  
մի և նոյն ժամանակ Բուլղարիայի սահմանների  
ուղղելը, 4) Բուլղարիայի և Հերցեգովինայի սե-  
ղական ինքնօրինութիւնը և Չէրնօզօրիայի  
ընդարձակումն, վերջապէս 5) Ռուսաստանը  
պահանջում է Թիւրքիայից Բաթում, և պա-  
տերազմական ծախսերի գրտմական վարձա-  
տրութիւն (յօտարիւրօյա), մի և նոյն ժա-  
մանակ Սուլթանը պարտաւորվում է յանձն  
առնել վճուել հարցը թէ ինչպէս պահպանել  
Դարբանդեան նեղուցը Ռուսաստանի շահերի  
համար:

Ս. ՊԵՐՏՐՈՒՐԳ 27 յունվարի Այս է Ս.  
Պետերբուրգի կուրսը Պետական բանին 50%  
տոմսակները արժեն՝ առաջին շրջանի 96  
րուբլ կրկնորը շրջանի 96 ր. կրկնորը 94 3/4  
չորրորդ 95 ր.: Ներքին առաջին 50% փո-  
խառութեան տոմսակը արժէ 234 ր. 50 կ.  
կրկնորը փոխառութեան 233 ր. 25 կոպէկ:  
Արեւելեան փոխառութիւնը արժէ 93 ր., Պո-  
լուիմպերիայի գինը 7 րուբլ և 60 կոպէկ է:  
Տրամադրութիւնը հաստատ է:

